ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Բաբկեն Փաշինյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության արտաքին հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ղազախստան, ք. Ալմաթի, 2024 թվականի փետրվարի 21-ից փետրվարի 23-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Ֆիսկալ ռիսկերի կառավարում» թեմայով աշխատաժողովին, որի շրջանակներում ներկայացվել է հարկաբյուջետային ռիսկերի վերլուծության, կառավարման և բացահայտման մեթոդներ և հայեցակարգեր, որոնք միտված են կարողությունների զարգացմանը:

Հրավիրված էին տարբեր երկրների ներկայացուցիչներ, որոնք կիսվեցին իրենց փորձով՝ հարկաբյուջետային ռիսկերի բացահայտման, վերլուծության և կառավարման ոլորտում:

Ներկայացվեցին շնորհանդեսներ, իրականացվեցին խմբային քննարկումներ և փոխգործակցություն ԱՄՀ փորձագետների հետ՝ զարգացող միջազգային փորձի, տարածաշրջանային առաջընթացների և թափանցիկության համար վերլուծական գործիքների օգտագործման վերաբերյալ:

Աշխատաժողովը հանդիսանում էր հարթակ գործընկերների հետ հարկաբյուջետային ռիսկերի կառավարման լավագույն փորձի փոխանակման համար՝ նպաստելով մասնակից երկրներում հարկաբյուջետային կառավարման և կայունության բարելավմանը:

5. Քննարկված թեմաները՝

1. Ֆիսկալ ռիսկերի վրա ազդող մակրոտնտեսական և հարկաբյուջետային զարգացումները,
2. Ֆիսկալ ռիսկերի կառավարման հայեցակարգը երկրների օրինակների և փորձի ուսումնասիրություններ, միջազգային պրակտիկա
3. Պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարում, երկրների օրինակների և փորձի ուսումնասիրություններ, միջազգային պրակտիկա,

4. Պետություն-մասնավոր համագործակցությունից բխող հարկաբյուջետային ռիսկերի կառավարում, երկրների օրինակների և փորձի ուսումնասիրություններ, միջազգային պրակտիկա,
5. Գործիքներ՝ բացահայտելու և վերլուծելու հարկաբյուջետային ռիսկերը
6. Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած հնարավոր հարկաբյուջետային ռիսկերի կառավարում
7. Գործնական առաջադրանքներ միտված հարկաբյուջետային ռիսկերի գնահատման և առաջնահերթությունների բացահայտմանը՝ օգտագործելով ԱՄՀ-ի հարկաբյուջետային ռիսկերի գնահատման գործիքը,
8. Ֆիսկալ թափանցիկություն և հարկաբյուջետային ռիսկերի բացահայտում, երկրների օրինակների և փորձի ուսումնասիրություններ,
9. Խմբային քննարկումներ՝ հարկաբյուջետային ռիսկերի կառավարումն ուժեղացնելու կապակցությամբ

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատաժողովի շրջանակներում նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են քննարկումներով՝ հնարավորություն տալով պարզաբանելու նոր գործիքակազմերի առավելություններն ու կիրառման հնարավորությունները: Աշխատաժողովի ամփոփման փուլում Հայաստանը ներկայացնող մասնակիցների կողմից ծավալուն և մանրամասնորեն ներկայացվել է Հայաստանում ֆիսկալ ռիսկերի ուղղությամբ կատարված աշխատանքը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Քննարկվել են որոշ հնարավոր երկկողմանի համագործակցության հնարավորություններ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ առանձին երկրների ներկայացուցիչների հետ՝ անհրաժեշտ ուղղություններով նյութերի, տեղեկատվության և փորձի փոխանակման, ինչպես նաև առաջիկայում տարբեր ձևաչափերով քննարկումների անցկացման նպատակով: Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչների հետ քննարկվել են ֆիսկալ ռիսկերի կառավարման գործառույթներին առնչվող կարիքները և նախաձեռնվել է գործիքակազմի կիրառման զարգացման ուղղությամբ որոշակի քայլերի իրականացում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովում քննարկված հարցերի, արդյունքների մասին իրազեկվել են վարչության մյուս աշխատակիցները: Ըստ անհրաժեշտության կտրամադրվեն մեր կողմից ներկայացված բոլոր շնորհանդեսները և այլ նյութեր, ինչպես նաև բանախոսներից և փորձագետներից ստացած բոլոր նյութերը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Բաբկեն Փաշինյան՝ **28 փետրվար, 2024թ**

.